

ԳՐԱԴԱՐԱՆ

ԼՈՒՍՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՅՈՎԱՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
№ 13 ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ № 13

Ն. ՍԵՄՅՈՆՈՎ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԻՑ ԳԵՂԱՄԸ

Փոխադրեց՝ Խ. Ե. Կ. Ա. Պ. Ե. Բ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1929

1076



Ն. ԱԵՄՅՈՒՆՈՎ

ԳՅՈՒՂՑՂՅԱԿԻՑ ԳԵՂԱՄԸ

Փոխադր. Խ. ԿՈ - Ա. ՊԵՐ

A II
Ա Կ 5 5 4



Հր. № 875. Գրառելով մարտի 1061 (թ). Տիրամ 1500
Գևորգոսի տառիկն ազարտն Վազգործականութ
Պատվել Հ 23



ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԵՂԱԽՏՈՂԱՆՑ ՏՈՆՈ
ՔՈՉԱՐԱՆՑ ԱԹՈ
ՔՅՈՍԱՆՑ ՎԱՐՈՍ } ԿՈՒԼԱԿՆԵՐ.
ԹՈՒԽԻԿ—Տոնովի աղջիկը,
ՄԱՐԿՈՍ,
ՀՈՌՈՄ—Մարկոսի կինը:
ԿԱՄՍԱՐ—Մարկոսի ճարմանը:
ԳԵՂԱՄ—Նախկին կ. բանակալին:
ԱԼՈ
ՏԻԿՈ } Վասիլանց նորահաս տղերքը
ԳԱՎԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐԸ,
ԳԱՎԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԴԱՀԸ,
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ.

ԳՐԻՄ ՅԵՎ ՀԱԴՈՒՍ

- ՏՌՆՈ.—Բարձրահասակ, դեմքը խելացի և հրամայողական. 45
տարեկան, մաքուր, կիսագիղացու և կիսաքաղաքացու
պես հագնված:
- ԱԹՈ.—Հաստ, 50 տարեկան. խորամանկ դեմքով, հագնված
գլուղացու պես:
- ՎԱՐՈՍ.—Արագաշարժ ծերուկ, յերեսը նեղ, աչքերը չար և վրի-
ժառու, դիտմամբ աղքատի պես հագնված:
- ՄԱՐԿՈՍ.—Լզարիկ, շարժուն, 45 տարեկան գլուղացի. խելացի
և ծիծաղ շարժող դեմքով: Հագուստը պատառութած:
- ՀՈՌՈՄ.—Մի հաստ, յերեսը կնճռոտած, շատ աղքատ հագնը-
ված կին:
- ԹՈՒԽԻԿ.—16 տարեկան, խալտարղետ շոր հագած մի աղջիկ:
- ԳԵՂԱՄ.—Իր մեջն ամփոփված, լուրջ, լիխացի և զգալուն զո-
րացրված կ. բանակալին: Վրան կ. բանակալինի հնա-
ցած շորեր:
- ՄՆԱՑԱԾՆԵՐԸ.—Սովորական չքավոր գլուղացիներ:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐ

Դյուզացիները խումբ-խումբ հավաքված խրճիթների առաջ.

- Լսէլ եք:
- Լսէլ եք, համ:
- Ասում են, վոր մեր գործերից բան են գրել լրագրում:
- Խնչպես չեմ: Ինձ մոտ բարձր ձայնով լրագիրը կարդում եր Մխիկի թոռը: Մեր կոռպերատիվից բան ե գրած:
- Աչ թե ի՞նչ:
- Եղանակ ել գրված ե, վոր եղանակ մեզ մոտ, ձլոխան գլու-ղում, համ:
- Եղանակ ել գրած ե:
- Անուններ հիշված կան, համ:
- Ցեվ անուններ, ու Մանանը վոր պետք ե, երված ե:
- Ցեվ չասեք մեր ձլոխանը հայտնի դարձագ: Լրագրում մեր մասին ել բան գրեցին:
- Հարեան, հարեան, դեհ մի ասա, ինչ են ասում եղ մար-դիկը: Ասում են, վոր լրագրում մեզ բոլորիս ներկած ե:
- Չե, մի բոլորիս: Վոր մենակ մեր կոռպերատիվի մասին են գրել, եղ ճիշտ ե:
- Ե, ի՞նչ ե գրած, մի լսենք:
- Ի՞նչ ե գրած: Գրած ե, վոր կոռպերատիվում խցկվել և Գեղու-տողանց Տոնոն, ենահղի բոլոր գործերն իր ձեռքն ե առել Մեր տգիտության լերեսից իր գրպանն ել լցնում: Աչ թե ինչ: Ճիշտն ել գրած ե:
- Այս, ճիշտ ե: Ճշտից ել ճիշտն ե գրված: Ցես այն ել գիտեմ. կոռպերատիվը հիմնելիս ասում ելին, թե լավ կլինի: Հակա-ռակը դուրս յեկավ: Դուրս յեկավ, վոր ամեն ինչ թանգ ե, առնելու բան չկա: Միայն Գեղուտողանց Տոնոն ե, վոր

հարստանում ե ու հարստանում: Լուծ-լծկան և առել, կոյ
ու կթան և ձեռք բերել Աղջկան խաս տպրեշում և հագցը-
նում: Յես եղ նկատել եմ:

- Բոլորը զիտելին արդ բանը: Բոլորը նկատել են:
 - Նկատելը նկատել ելին, բայց բոլորն ել լոելով լսել ելին:
 - Եղ ել և ճիշտ: Լով ե, զանվեց մի խելացի մարդ, զագեթին
զրեց: Յեթե վոչ կնստելինք, գեղ, զեղովի և Տոնովի ունե-
ցածի վրա կզարմանալինք:
 - Բա եղ մզ և զրել:
 - Իսկապես եղ մզ և զրողը:
 - Առում են, զագետում միայն կոմունիստներն են զրում:
 - ԶԵ վոր մեր զլուզում վոչ մի կոմունիստ ել չկա, եղ թնչալես
լեզավ:
 - Գրողը մերոնցից եւ կետ առ կետ մեր բոլոր զործերը զիտի:
 - Ե, հա, եղ ով կլնի:
 - Այ քեզ բան, չդիտենք ումից շնորհակալ լինենք:
 - Այ թե իմանալինք զրողն ով և լեզել...
-

ՅԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

ՏՈՆՈՅԻ ԽՐԵՆԻԹԸ. ինքը Տոնոն կ. բանակային Գեղամը գործի հետ ե, դուրս ու ներս ե անում. Խրիսիթ և մտնում Քոսանց Վարոսը:

ՏՈՆՈ. — Լսել ես, հա, ինչպես ինձ վիրավորել են, պատվիս կպել են:

ՎԱՐՈՍ. — Ե, աեր մեղա քեզ, եղ ինչպես ե յեղել:

ԱԹՈ. — (Ներս մտնելով) Տոնական, գաղեթը կարդացել ես:

ՏՈՆՈ. — Հա, կարդացել եմ. Հեյ վախ, հեյ վախ, գեղ-գեղովի զի-աեն. փողոցով գնալիս յերեսնվարս ծիծադում են:

ԱԹՈ. — Մոռավ մեր գործը. Հիմի կոռպերատիվի համար նոր վարչություն կընտրեն:

ՎԱՐՈՍ. — Տեր, մեղա քեզ, մեղա քեզ, վ՞ր մեղքերիս համար դու մեղ պատժում ես:

ԱԹՈ. — (Ծովելով դեպի Քեղամը) Ես ով. ե.

ՏՈՆՈ. — Դեղամն եւ Նա խրճիթի պակաս-պուատը սարքում ե. կարմիր բանակում շատ արհեստներ ե սովորել Լավ բան-վոր ե:

ԱԹՈ. — Հո պատը ծակ չի: Մուտք խոսել կլինի:

ՏՈՆՈ. — Ելիսի, կլիսի. Լուս ու մունջ տղա յե. վոչ ել կոպիտ: Նա իր գործին ե, մեղ ել չի լսում:

ԱԹՈ. — Լավ ե, վոր եղպես եւ Քո հաշիվսերը, զոնե կարգին են:

ՏՈՆՈ. — Հաշիմներս, խոսելն ավելորդ եւ Ենալիսի հաշվապահություն ունեմ, վոր սատանան ել պակաս բան չի գտնի: Ամեն ինչ կարգի-սարքի: Բայց դրանով ինչ, հո ցավս չի թիթեանաւ:

ԱԹՈ. — Ե, ինչքան ել չլինի, բան ե ելի, թե չե դատարան քաշ կտալին: Են ժամանակ մենք ել քեզ հետ պատասխան պիտի տալինք, միասին ենք գործել. եղ ելի լավ ե, վոր թղթերից չեն բռնի:

ՎԱՐՈՍ.—Եղ վոր չնշհավատն ե զրել եղ ամենը:

ՏՈՆՈ.—Յես ել եղ բանն եմ մտածում, լցնում, դատարկում
եմ, թե զրողն ով կլինի: Ելի զլուխ չեմ հանում: Մեր
զլուզը հանգիստ ե, վոչ կոմունիստ և վոչ ել կոմսոմոլիստ
ունի: Եղ պիղծ հոգին տեսնես վարտեզից ե լույս ընկել ու
հսպիսի բան զրել:

ԱԹՈ.—Գիտես ինչ, Տոնական, իմ ենապես եմ կարծում, վոր
զրողը Բոգոլանց սատանա Մարկոսն ե:

ՏՈՆՈ.—Շատ կարելի լի, վոր եղ Մարկոսն ե, ախր նրա սատ-
կած յարուն պարտքի տեղ եմ վերցրել:

ԱԹՈ.—Ըհը. կծկի թելը գտանք:

ՎԱՐՈՍ.—Ասել ե, վրեժ ե հանում: Այ զու, հում կաթնակեր
մարդ:

ՏՈՆՈ.—Դրուստ ես ասում, Վարսու Խորամանկ ազգիս եւ Զուր
չի, նրան սատանա Մարկոս են կանչում: Ամեն որ գաղեթը
ձեռքին քաշ ե գալիս են ե, վոր են ե:

ԱԹՈ.—Պիտի խրատվի եղ շունը:

ՎԱՐՈՍ.—Մուս:

ՏՈՆՈ.—Բան չկա: Խոսքդ ասա: Ռոտար մարդ չկա: Դեղամը ար-
գելք չի, բանի հնա ե, չի լսում:

ԱԹՈ.—Պիտի խրատվի, ասում եմ, պետք ե, վոր մլուս անդամ
չհաջի:

ՎԱՐՈՍ.—Չլինի պատասխանտու լինենք:

ԱԹՈ.—Ինչ պատասխանատու. դատարկ բան ե, կարելի լի վոր-
ծը լավ սարքել կլոփ, կուլ կաս: Վկաներ չեն լինի:

ԱԹՈ.—Նա ժամ չի գնում: Կիրակի որը կինը պատարագ կդնա
և ինքը տանը մենակ կմնա: Են ժամանակ գնանք մոտը,

հետը խոսենք և զորս զու պատվիրես, մի լավ հախիցը գանք:

ՏՈՆՈ.—Հետը խոսենք, համ, համ, համ, ինչ լավ խոսել կլինի: Նա
ել չի մոռանա ինչ և նշանակում գաղեթում զրել:

ՎԱՐՈՍ.—Հետը խոսենք, համ, համ, համ:

ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Մարկոսի խրճիթը։ Մարկոսի ծեռքին գաղեթը։ Նրա կինը պատրաստվում ե ժամ զնալու։

ՀՈՌՈՍ. — Արգեն մարդիկ ժամ են գնում, իսկ սա գաղեթի յետեվից և ընկեր եղ գաղեթը քեզ շատ բան ե տալիս։ Աղքատ ես, աղքատ ել կմնաս։

ՄԱՐԿՈՍ. — Հե, չես տեսնում, են ե աղոթքով հարստացել ես։ Վերջին գոռշները տալիս ես կանթեղի ձեթի և մոմի սրբերի առաջ վառելու համար։

ՀՈՌՈՍ. — Ե՛, եղ գու լերը կոմունիստ դարձար։

ՄԱՐԿՈՍ. — Ես ծեր եմ, թե չե անպատճառ կոմունիստ կգրվելի։

ՀՈՌՈՍ. — Թյառ, ամոթ։

ՄԱՐԿՈՍ. — Թեզ ել, Հոռնմա, կոմսոմոլիի մեջ գրել կտալիք։ Ինչ կոմսոմոլիա կդառնայիր հա։ Աջ, ձախ, մեկ, յերկու, յերեք, Առաջին շարքերում չափ ու ձե կանելիր յերգելով։ Հա, հա, հա։

ՀՈՌՈՍ. — Ես հո մարդ չի, ասոված ջանիս պատիժ ե տվել։ Հրամի հարցնող լինի, թե ինչի՞ յես ատամ կրծտացնում։ Վերջին ձին ել պարտքի տեղ տարան, եղ նրա համար հեշ, ի՞նչ ե վոր։

ՄԱՐԿՈՍ. — Ե, Փոստոլականց աղջիկ, ի՞նչ ես հրամայում, ի՞նչ անեմ. լաց լինեմ։ Արտասունքս ել յուրիկիդ փեշերով սրբեմ։

ՀՈՌՈՍ. — Ի՞նչի կուլաս։ Գեղուտողանց Տոնոյի մոտ կգնալիր, վոտները հճամբուրելիր, ժամանակ կխնդրելիր։ Նա յել քիզ կխղճար, կողորմանար։

ՄԱՐԿՈՍ. — Կողորմանար, են ել ով, ով, Գեղուտողանց Տոնոն։ Դրանից հետո հիմար ես, այ կնիկ, ել ուրիշ վոչինչ, Ցեղ դու վոչ մի պըռետարական զգացմունք չունես։ Ա՛խ, ախ։ Լավ կլիներ գաղեթ կարդալ սովորելիր։ Հենց գաղեթում մի շարաթ եղ քո ավազակ Տոնոյին մի լավ նկարագրել ելին։

կարելի լի, թե վոր եղ առաջ լիդած լիներ, թե վոր նըս
մասին եղ թղթակցությունն առաջ լիներ, այս, կարելի լիր,
վոր յարուս տեղը մնար, Վողորման նմ, արնախում անիծ-
վածը:

ՀԱՅՈՂՄ.—Լուսմ Բու Զանզը ժամ և կանչում: Թե լերեսդ խաչա-
կնքել չգիտես, գոնի ուշունց ել մի տա:

ՄԱՐԿՈՂՄ.—Ո՞յ, ձեռք քաշի, քավթառ: Զայլակուշտ արիր ինձ:
Իսկ և իսկ հին սեծիմ:

ՀԱՅՈՂՄ.—Կերթամ, կերթամ, քեզ հետ զլուխ հանել չի լինի
(զնում ե):

ՄԱՐԿՈՂՄ.—Իսկ մենք հատեղ հանդիսատ կկարգանք, թե ինչ և
անում շրջապատը: Լավ դագիթ եւ Բալց ելի մեր զործերից
քիչ են զրում:

ԿԱՄՍԱՐ.—(*Եներ մՏնելով*) Մարկառ առնն Բու:

ՄԱՐԿՈՂՄ.—Տանն եմ, մտիր, մի և:

ԿԱՄՍԱՐ.—Յեռ եմ: Մի որով կացինդ չես տա, փակտ պիտի
ջարգեմ:

ՄԱՐԿՈՂՄ.—Տար:

ԿԱՄՍԱՐ.—Շնորհակալ եմ: Գաղեթ ես կարդում: Կարելի լի ելի
մեզ վրա բան զրած լինեն չա:

ՄԱՐԿՈՂՄ.—Են որվանից զեսը, իեր Գեղուտողանց Տոնուին կոռ-
պերատիվի համար զզեցին, ել բան չկա:

ԿԱՄՍԱՐ.—Հա մութ զործեր շատ են մնացել, և իս գնացի
(պատուհանն ե բնկնում բղով փարարած բար). ես ինչ բան ե:
Գրողի տարած լերեխոց բանն ե:

ՄԱՐԿՈՂՄ.—(*Վերցնում ե յեվ բացում տոմակը*) Զե, ես լերեխի-
րան չի: Ես ինչ վոր տոմսակ ե... նամակ, առանց մարկի:

ԿԱՄՍԱՐ.—Այ քեզ փոստ:

ՄԱՐԿՈՂՄ.—Կանդ առ, այ քեզ բան: Դու լսիր, թե ինչ և զբած:
(Կարգում ե) Մարկոս, Գեղուտողանց Տոնոն կասկածում ե:
Վոր զու զրած կլինես իր խարդախություններից: Եղ պատ-
ճառով գալիս և քեզ ծեծելու, լեր կինդ ժամ գնացած լինի:
Նրան տուն չթողնես մենակ ժամանակու: Ալ, եսպես և բա-
նը: Ուզում ե քեզ ծեծի: Անիծվիս զու Տոն...

ԿԱՄՍԱՐ.—Բալց զրողն մի ե:

ՄԱՐԿՈՂՄ.—Զգիտեմ, հատեղ ասած չի: Միայն թվում ե, թե դը-
րուստ ե: Ես բարի մարդը ինձ նախազգուշացնում ե: Յես
կարդացել եմ, վոր կուլակները չեն սիրում նրանց, ովքեր

թերթերում գրում են: Թղթակիցներին ատելով, ատում են, ծեծում են նրանց և մինչև անզամ սպանում ել են:

ԿԱՄՍԱՐ.—Ե, խոսքը մեր մեջ մեա, Մարկոս, գու, յես գրել Տո-
նոլի մասին:

ՄԱՐԿՈՍ.—Վճէ, կամսար, վճէ, յես չեմ գրողը: Թերթեր կարդալը
կարգում եմ, բայց մտքից ել չի անցել, վոր կարելի յե
մեր գործերից զբել ե, ինչ կա վոր. Գեղուտողանց Տոնոն
կարսղ և կարծիք տանել ինձ վրա, վոր յես եմ զբել, իրե-
նից վրեժ եմ հանել ձիս ձեռքից խիելու համար: Ա՞խ դու
սաղաւել, զալիս և ինձ ծեծելու:

ԿԱՄՍԱՐ.—Ե, դու ինչ պիտի անես:

ՄԱՐԿՈՍ.—Պիտի մտածել: Գալիս և ինձ ծեծելու: Ինչպես չե,
փայլը քիչ չի լինի, չարի զավակը Յերր կինս տանը չլինի:
Տեսնում ես, ինչ և մտածել: Այ համ, զեհ պասիր: Յես քո
ասածը չեմ: Լոլո, լոլո, քրզի ազջկան ել լոլո: Ինձ սատանա
Մարկոս են ասում. թե դու ազվեսն ես, յես ել պոչն եմ:
Յես ել մի բան կհնարեմ, քեզանից ավելի ուստա յեմ: Մի-
այն թե եղ... այ թե ինչ, հա, հա, հա, կամսար: Յես ես
բանն եմ մտածում, հարեանս, յեթե դու ինձ ոգնես, ընենց
մի բան գուրս կզա, վոր ել ասել չի լինի:

ԿԱՄՍԱՐ.—Ինչ ե, ասա:

ՄԱՐԿՈՍ.—Այ թե ինչ: Դու վազիր հարեանների մոտ, մի յեր-
կուսին առ, հլա կարսու ել ավելի, յեկեք մեր բակը, պա-
տուհանի քակը Հենց վոր գո Տոնոն և սկսի իր միտքը
գլուխ ըերել դուք իսկույն ներս թռեք լուսամուտից: Հը՝
լավ չի լինի:

ԿԱՄՍԱՐ.—Այ թե հնարեց: Այ դու սատանա Մարկոս: Քո ամեն
բանդ ծիծաղով ե:

ՄԱՐԿՈՍ.—Լավ և ծիծաղով, քան թե լացով-թացով:

ԿԱՄՍԱՐ.—Ե, ավելի լավ են չե, վոր նրան իսկի տուն չթող-
նես, վոնց վոր եղ տոմսակումն և գրած:

ՄԱՐԿՈՍ.—Վճէ, յես ինչպես խնդրում եմ, դու ենպես արա: Ես-
ուղես շատ մաղալու կլինի: Ուզում եմ նրան ձեռք առնել,
մասիսարա զցել վրան: Միայն վոազիր:

ԿԱՄՍԱՐ.—Ե, լավ. կանենք: Եղ պատուհանների տակ, հա:

ՄԱՐԿՈՍ.—Հա, դրանց աակը Շտապիր, մեծ լավություն արած
կլինես: (Կամսարը զնում ե): Այ թե ինչ: Լրազրի համար
պիտի տուժեմ, թեե յես վոչինչ ել չեմ զբել: Գործեր, գործեր,

սարգկալին գործեր, Գեղուազանց Տոնոյի գործերու Ա՛խ դու
գեղուազանց Տոնո, պիտի և վասաւատու. Տոնու Շնայում ե պա-
տուհանից դեպի փողոց): Ոչ, ոչ, ոչ, հրեն գալիս եւ Մենակ
ել չի գալիս, իբ յերկու բատրակն ել հետք Կարող ե... Իս-
կապես ներս չառնեմ: Արդյոք հարեանը կարմղ ե մարդ բե-
րել ոգնության: (Դուռը զարկում են): Եղ սաղալիը կարող
ե ինձ սպանել (Նորից դուռը ծեծում են): Բանամ, չբանամ:
Մակը, մվ եք:

ՏՈՆՈ.—(Յերկու բատրակի հետ): Բարե, Մարկոս: Տունդ շնորհա-
վոր: Մենք քեզ մաս գործով ենք իեկել:

ՄԱՐԿՈՍ.—Բարե, Տոնո տխապեր, համեցեք ներս, նստեք սեղանի
շուրջը: Եղ ի՞նչ գործ ե, վոր ձեզ բերել ե իմ տունը:

ՏՈՆՈ.—Դործ ե, ելի, մի ծածուկ գործ: Դու են ասա, տանը
հո ուրիշ մարդ չկա:

ՄԱՐԿՈՍ.—Վոչոք չկա: Հոսումն եր, են ել ժամ գնաց: Նա շուտ
լեկողը չի, սիրում և սրբոց պատկերների առաջ ծունդ
գնել:

ՏՈՆՈ.—Բակումն ել:

ՄԱՐԿՈՍ.—(Նայելով դեսի լուսամուտը): Բակումն ել վոչոք չկա:
(Ինքն իրեն): Կան: Ցեկան: Ե, ել չիմի սարսափելի չի: (Դե-
պի Տոնոն): Դեհ ասա, եղ ի՞նչ գաղտնի գործ ե, սիրելի Տո-
նական:

ՏՈՆՈ.—Այ թե ինչ, սիրելի Մարկոս: Լրագրում դու են թղթակ-
ցությունը կարդացի՞ր:

ՄԱՐԿՈՍ.—Եղ վճրը:

ՏՈՆՈ.—(Ինքն իրեն): Հա, սուտ եշ ձեացիր, սատանա Մարկոս:
(Հետո Մարկոսին): Ի՞նչ ես խամ քանդում, են թղթակցու-
թյունը, վորտեղ ինձ զրպարտել են:

ՄԱՐԿՈՍ.—Ա՛խ, եղ են, վոր կոռապերատիվում կատարածդ գոր-
ծերի մասին ե գրած: Կարդացել եմ, կարդացել:

ՏՈՆՈ.—Ահա ինչ գտանք: Կարդացել ես: Այ եղ թղթակցության
համար մենք քեզ մի փեշքեշ ենք մտառցանում:

ՄԱՐԿՈՍ.—Փեշքեշ...

ՏՈՆՈ.—Հա, փեշքեշ: (Բատրակներին): Դեհ, իմ քաջեր, ցուց
տանք սրան—շուն թղթակցին, թե ինչ ե նշանակում ազ-
նիվ մարդկանց արատավրբել: զրպարտել: (Բատրակները
հարձակվում են Մարկոսի վրա):

ՄԱՐԿՈՍ.—(ձշում ե): Տղերք:

ՏՈՒՈ.—**Լոիր:** Բողազը բռնեք, (Կամսարը վրա յի հասնում Աղեմի
յել Տիկոյի նես): Ես ի՞նչ բան ե, պարոն Տոնո, Մարկոս, փա-
թաթվել եք, իբար բոյ եք չափում, (Բատրակները յես են
բաւկում):

ՄԱՐԿՈՍ.—Յես ինչ գիտեմ, զատիկը չեկած, սրանք իմ զատիկն
են շնորհավորում: Հա, հա, հա: Մի հարցրու, թե սրանք
ինձնից ի՞նչ են ուզում:

ՏՈՒՈ.—Ինչպես համարձակվեցիր ասելու, թե տանը վոչոք չկա:
ՄԱՐԿՈՍ.—Հա, հա, հա: Բարի մարդու մեկն ինձ զգուշացրել եր,
վոր գու գալիս ես ինձ ծեծելու, իբրև թե թղթակցությունը
յես եմ գրել Այս հենց պատճառով յես պատրաստվեցի ծեզ—
իմ ցանկալի հոռերերին եսպես ընդունելու:

ՏՈՒՈ.—Իմաց են տվել քեզ, Եդ ով պիտի լինի:

ՄԱՐԿՈՍ.—Յես ուրիշ բան ել չգիտեմ: Այ են տոմսակը, վոր
պատուհանից ներս քցեցին:

ՏՈՒՈ.—Վոր եղախս ե, ուրեմն թղթակցություն գրողը դժւ չես:

ՄԱՐԿՈՍ.—Յես չեմ, տես չեմ: Փամանակին միտքս չի լեկել, վոր
կարելի է գրել:

ԱԼԵՔ.—Տոնո ամի, ինչ լավ գործեր եք բռնում. հա, ասել չի
լինի:

ՏԻԿՈ.—Տոնո ամի, կարծում ելիք թե ենպես ել կանցնի: Խորո-
վածի հոտի գնացիք, համա ուրիշ բան ելին դաղում:

ՏՈՒՈ.—Ես ինչ բան ա, աստված, ել բեթարից դու ազատես, մեզա
քեզ, մեղա. ի՞նչ ժամանակի հասանք:

ՄԱՐԿՈՍ.—Հա, հա, հա...

ԶՈՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Տօնոյի առանք՝ Տոնոն, Աթոն յեվ Վարոսը:

ԱԹՈՒ. — Այ ինչ, քաղաքացի-ընկերներ, այ ինչ, թանգաղին անտեր. Մենք պիտի մտածենք — ինչ անենք, վոր վոտով զիւով չկորչենք:

ՏՈՆՈ. — Այս, պիտի մտածենք: Դժվար է մեր բանը: Մեր զերս կորցնում ենք:

ՎԱՐՈՍ. — Վատ կլինի, բոլորովին վատ: Չորս կողմերս թշնամիներ: Վերջին ապրուստս ել ուզում են խլեր:

ԱԹՈՒ. — Են որդանից, իբրև պ. Տօնո, ձեզ կոռպերատիվից արձակեցին, բոլորիս բանը վատացավ: Ել վոչ մի բանից բոներու տեղ չմնաց:

ՏՈՆՈ. — Եղ ճիշտն ես ասում: Հենց ուզգակի, խակ և խսկ, վոռներիմ առակի հողը կորցնում ենք: Մինչև ալդ, ամեն տեղ պատիվ ու ճարգանք կար և լավ զործեր: Ոգտավիտ և շահավետ: Խակ հիմա, տոպրակը վիզդ պիտի զցես աղքատի նման և վոզորմություն խնդրես՝ եղ բոլոր հարկերի և ճշշումների լերեսից:

ՎԱՐՈՍ. — Ախ, հիսուս նազովրեցի: Ես ինչ վատ ժամանակի հասանք: Ամրող գլուզում մենք լերեքս ելինք մնացել կանոնավոր անտեսության տեր, են ել եսորվանից եղուց հավատացած չենք, վոր ձեռքերիս կմնա: Ես ինչ որի հասանք, վայ, վայ:

ԱԹՈՒ. — Մեզ մի բան և մնում: Մեզնից մեկնումեկը գլուղ-խորհրդի մեջ պիտի ընկնի: Նոր ընտրությունները շատ հեռու չեն:

ՏՈՆՈ. — Ճիշտ եւ ճիշտ եւ: Լավ բան ես ասում, Աթու: Յեթե մեզնից մեկը խորհրդում լինի, վոտներիս տակի հողը կամրջանա:

ՎԱՐՈՍ. — Աթովի ասածը միշտ ել ուղիղ և դուրս դալիս: Դրանից ավելի լավ բան չես մտածի:

ՏՌՆՈ. — Բայց ի՞նչպես անցկացնենք այդ: Զփլազները չեն սիրում լավերին, ուրիշի ունեցածը նրանց աչքը հանում եւ իսկ մեր գլուղը, բացի մեզնից, տկլոր և ու տկլոր:

ԱԹՈ. — Վոչինչ: Կա մի լավ միջոց: Շատ լավ կսիրեն և ծախեցն ել զեռ ուրախ: կլինին:

ՎԱՐՈՒՄ. — Եղ միջոցն ի՞նչ միջոց եւ:

ԱԹՈ. — (Նույ արադը հանելով գրպանից): Այ, միջոցն այս եւ:

ՏՌՆՈ. — Հա, հա, հա: (Միծադում եւ):

ՎԱՐՈՒՄ. — Հա, հա, հա: (Միծադ):

ԱԹՈ. — Իմ ապարատը տռաջին տեսակի լի, պիտականից ավելի լավ եւ քաշում:

ՏՌՆՈ. — Ճիշտ եւ: Դրա համար ուրախ կլինեն և իրենք ել կառնեն:

ԱԹՈ. — Արազը բաց կթողնենք այս պայմանով: Ով վոր մեր ուղած մարդուն ձայն կտա, նա լել արադ կստանա: Այսպիսով գործը շատ լավ կերթա, բան գուրս կզա:

ՏՌՆՈ. — Այս, բան գուրս կզա:

ՎԱՐՈՒՄ. — Հա, հա, հա: Այ քեզ միջոց, ի՞նչ միջոց: Խմի արադ, քեֆդ չաղ, սիրադ ուրախ, միտքդ պայծառ ու լուսավոր: Ասլանի կաթ եւ, ասլանի կաթ: Խմիր ու կովիր նոր կարգերի, նոր կենցաղի զեմ, հա, հա, հա...

ԱԹՈ. — Հիմի վճռենք, թե մեզնից վժրս պիտի մտնի գյուղխորհնրդի մեջ:

ՏՌՆՈ. — Եես ենպես եմ կարծում, վոր գու պիտի մտնես, Թոչարանց Աթու: Ինձ, եղ կոռպերատիվից հետո շատ անհարմար եւ: Դու և խելացի լես և լեզվով բերանով և մեր գործերը լավ գիտես:

ՎԱՐՈՒՄ. — Իհարկե, Աթոն պիտի անցնի, խոսք չկա, վոր Աթոն:

ԱԹՈ. — Այս, լես ել գիտեմ, վոր խորհրդի մեջ մտնելը ինձ և հարկավոր: Գյուղացիների թելը գտնել գիտեմ, նրանք իմ լիզուն շատ լավ են հասկանում: Գրել-կարդալու կողմից ել լետ չեմ մնում: Իսկ մեր մեջ ունեցած գործերի մասին խոսելը ավելորդ եմ համարում: Մեր միջի կազն ամուր եւ սերը հաստատ: Հա, հա, հա:

ՏՌՆՈ. — Ո՞խ, ի՞նչ լավ եւ:

ՎԱՐՈՒՄ. — Շատ լավ եւ, հրաշալի: Փառք քեզ աստված: Մեր հոգին կենդանություն կառնի:

ՏՌՆՈ. — Բայց առաջուց պիտի դատենք, չափենք, ձեենք, թե

ինչպես գարենք մեր գործերը, վոր լավ լինի. Ում հետ խո-
սենք, ում արադ աանք, վոր հիմար չլինի, գուրս շդա և մի
զբագետի մեր մասին բան հազորդի. Պիտի գորոշնք, թե ինչ
գյուղացիների տեղ աանք գյուղիորհրդում, վոր մեզ լսող,
մեզ համոզվող լինեն:

ԱԹՈ.—Յեկեք ես շիշը մի գատարկենք, մաքերս բանանք, նըս-
տենք մի լավ թարճ ու վարճ անենք:

ՏԹՆՈ.—Եղան եւ (Գոռում ե). Բողոյանց աղջիկ, Յեղսն, մեզ
համար ուտելու մի բան պատրաստիր. (Ներս ե գալիս
Յեղսն):

ՎԱՐԺՈՒ.—(Ձեռները տրելով): Հա, հա, հա. Մի խոսքով, գլխա-
գոր խորհուրդն ե:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Գավառական խմբագրատուն. լուսավորված ե բնիմի միայն մէ անկյունը: Այնտեղ տպագրող մերանա: Գործողությունը կատարվում ե մթության մեջ: Միայն ձայներ են լսվում:

1-ԻՆ ԶԱՅՆ — Յես մի առ ժամանակ չելի ուզենալ իմանալին, վոր յես ձեր թերթին թղթակցում եմ: Ավելի շատ բաներ կարող եմ գրել:

2-ՐԴ ԶԱՅՆ. — Նորություններ չունե՞ք ասելու:

1-ԻՆ ԶԱՅՆ. — Մոտ որերս խորհրդի վերընտրություն ե մեզ մոտ ինձ թվում ե, վոր կուլակները պատրաստություն են տեսնում, բայց յես չհասկացա թե բանն ինչ ե: Մի ինչ վոր շատ ծածուկ գործ են կատարում մեր կուլակները:

2-ՐԴ ԶԱՅՆ. — Ի՞նչպես անցավ ձեր միտինդը:

1-ԻՆ ԶԱՅՆ. — Վատու: Գլուղացիները հարրած ելին յեկել: Աղմուկ բարձրացրին, չելին լսում գավառից յեկած ճառախոսին:

2-ՐԴ ԶԱՅՆ. — Այդ այդպես: Ձեզ մոտ արադ քաշողներ կտն:

1-ԻՆ ԶԱՅՆ. — Կասկած ունեմ Քոչարանց Աթովի, մեր այդ կուլակի վրա, բայց բռնել դեռ չեմ կարողացել: Մեր միլիցիան թույլ ե:

2-ՐԴ ԶԱՅՆ. — Հետևեցեք, թե ինչպես կնթանան վերընտրությունները և հաղորդեցեք մեզ: Ինքներդ յեկեք անձամբ, կամ նյութ ուղարկեցեք:

1-ԻՆ ԶԱՅՆ. — Լավ:

ԱՐԱՐԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Գյուղացիները զարով հավաքվում են խրճիթների առաջ: Հուղած խոսում են:

- Ե՞ս ինչ բան ե, իսկապես:
- Մենք նրան ընտրեցինք, իսկ նա հիմա մեղ հետ խոսել ել չեմ ուզում:
- Ազա յե դարձել մեր զիլիին:
- Ա, ջուրը զա ինձ տանի: Իս ինչ պիտի անեմ հիմի: Ասում ե բորոք փողերը ես մի շաբաթվա մեջ բեր, լիթե վոչ, քեզ կրանտարկեմ: Ե, իս վորանդից բերեմ: Ասած մի եր ևսքան վճարողը, առաջգանը վորտեղ, հիմիկանը վորտեղ: Ես ինչ բան ե, առ: Տնով տեղով, կնկով, լիրեխեքով կորած եմ, կորած:
- Զենդ զլուխով մի զցի Բոլորս ել մի հալի լենք: Քոչարանց Աթոն և կազմել այդ անկանոն ցուցակները: Բոլոր աղքատներին լիրկրի լիրեսից ջնջել կուզի եղ կուրսակը:
- Հարուստների ասեղն և թելում: Ասում են, վոր եղ Աթոն, Գեղուտողանց Տոնոն և Քոսանց վարուսը միասհարկից աղատվել են:
- Ա, իս, աստված իմ, աստված:
- Աթոն ընտրվելիս խոստացավ մեր չքավորներիս շահերը պաշտպանել, իսկ հենց վոր նախագահ դարձավ, առաջվա պրիստավից ել, ուրիագնիկից ել տվեց, անցավ:

ԱԼԵՔ.—(Ներս զարով Տիկոյի նես): Եղ ել ձեր Աթոն:

ՏԻԿՈՅ.—Տեղն և ձեզ: Հախն և ձեզ: Ինչու ելիք եղ կուլակին ընտրում: Ձեր մեջ մարդ չկար, ինչ:

— Մերոնք ել մատից փուշ հանողը չեն, մեղ քիչ են ուզնում, նրանց հետ են նստում, կանգնում, նրանց հետ են թղթերը ստորագրում: Վոչ մի դիմադարձ խոսք չեն ասում:

ԱԼԵՔ. — Այսու, զուք նրան ոգնական ալինպիսիներին ընտրեցիք, վոր հիմար ենս նրանք բոլորը մի զուխս Աթողից վախում են և նրա զուղուկովն են պար զալիս. Միենառուն և, նրանց լինելը-չլինելը նույն բանն է: Կուլորը թե հստեղ, թե Բաղդատ, ասում ե առածը:

— Ե, ինչ է վոր: Տղան ճիշտն ե ասում: Պետք եր զիտակից զյուղացիներ ընտրել. որինակ, Մարկոսին: Նա ամեն մի զրություն կարգում ե ու հասկանում, կամ կ, բանակից արձակված Գեղամին, նա խելոք տղա յե և չքավորների կողմը պահող:

— Բա, Գեղամը: Ուզիղ մարդ ե: Զի գոռում-գոշում, իրեն չի կորցնում, իսկ յեթե ոգնել և հարկավոր, նա բոլորից ել լավ ոգնություն կհասցնի, ամեն բան տեղը տեղին բացառում ե: Շիտակ մարդ ե, շիտակ:

ԱԼԵՔ. — Շիտակ ե, բայց զուք դարձալ չնտրեցիք:

— Սատանան մտքերը պղտորեց: Են գեին ընտրեցին, վոր ուսերիս նստի:

ՏԻՒԱԼ. — Հա, չե մի սատանան մտքերը պղտորեց, եղ վ՞ր սատանան, քեռի, վորի անունն արագ ե:

— Դրա դեմք յես ել ի՞նչ ասեմ. զրուստ ե, զրուստ: Մի սաղ շարաթ, են ել քիչն եմ ասում, Թոչարանց Աթոն արագով եր մարդ վորում, սրան-նրան արագ եր խմեցնում: Նրա ապարատը շատ-շատ լավն ե: Լավ արագ ե քաշում:

ԳԵՂԱՄ. — (Մոտենալով): Այ թե ինչ: Դեհ զու ասաւ նա արագը ձրի յեր տալիս քեզ:

— Հայտնի բան ե, վոր ձրի: Ասում եր, մի փորձի իմ քաշած արագը: Հա, միշտ ել քեզ կխմեցնեմ, յեթե զու ինձ ձայն տաս զյուղխորհուրդ մտնելուս համար: Յեզ ուրիշ զյուղացիների անուններ ել եր տալիս, վորոնք իր հետ պիտի ընտրվելին:

ԳԵՂԱՄ. — Հլա մտիկ սրան: Այ քեզ բան եղ վ՞նց եր, վոր մենակ քեզ եր պատվում արագով: Ինձ վոր մի անգամ ել չի պատվել:

— Ի՞նչպես թե մենակ նրան: և ինձ, և Մխիթին, և Զալուլին, և Իրիցանց Լոշտո Կարուին, Ուստանց Բեկուին, ել վորն ասեմ, համարյա թե գյուղի կեսին ծածուկ իր մոտ եր կանչում, արագով պատվում և ամեն մեկին ջոկ-ջոկ ասում: «գիտես», ինձ պիտի ձայն տաս»:

ԳԵՂԱՄ. — Այս. զուք ձեր կաշին ծախեցիք կուլակին արագով: Եժան եք գնահատել, եժան եք ծախել:

— Ե, հե, ինչպես եր, վոր եղանակ լեզագի Խմած ժամանակը
և նոպես թվաց, վոր Աթոն շխտակ մարդ ե, առաջին մարդն ե:

ԱԼԵՔ. — Այ քեզ առաջինը:

— Յեզ չե վոր խոստացել եր մեր շահերը պաշտպանել:

— Ուսում ե մեզ անիրավը: Արյուններս ծծում ե, ծծում:

ԳԵՂԱՄ. — Բա ինչ կանի, կծծի, ել չի խնայի:

— Դու հա մի քիչ յտածի: Կեզծ ցուցակներ ե կազմել:

— Տեսնում ես ինչ փշություն, հը:

— Հենց վոր մի բան ասելու լինես, բզագում ե զլիսից
գուրս, զուք հակա լիք, հականեղափոխական եք: Խորհրդա-
լին իշխանությանը հակառակ եք գնում, ուրիշ խոսքով,
իրեն՝ Աթոնին, իս ձեր բոլորիդ, ասում ե, բանդ կնստե-
ցնեմ: Նրա գեմ ել ինչ կարող ես ասեր:

ԱԼԵՔ. — Եզ բոլորը պիտի շրջգործկոմում պատմել: Քոչարանց
Աթոնին ել պատիժ կլինի:

— Յեզ ուղղակի ամենամեծ իշխանավորին պիտի գանգատ-
վել: Յեթե վոչ՝ կորած ենք:

— Սուտ ել չի վոր եղանակ ե: Գեղամ, քո խորհուրդդ ինչ ե:
ԳԵՂԱՄ. — Խորհուրդս ինչ ե: Ասեմ ձեզ, ընկերներ, ալ թե ինչ ե:
Են բոլորը, վորոնց Աթոն արազով պատվել ե, թող գան-
ինձ հետ, իսկուն գնանք: Յես այդ գործի մասին մի թուղթ
կկազմեմ, զուք բոլորդ կստորագրեք:

ԲՈԼՈՐԸ. — Շատ ճիշտ ե.

ԲՈԼՈՐԸ. — Եղանակ ել պետք ե:

— Ո՞յ, աեսեք դրանից վատ բան չծնանի: Աթոն ուժի տեր
ե: Այ նրա խոսքը: Ասում ե, ինձ համար կոմունիստ-
ները լեզած, չեղած մի հաշիվ ե: Յես բոլորից բարձր եմ:

ԲՈԼՈՐԸ. — Ե, զուք լիլ բան ես ասում, ինչ վատ բան կարող ե
լինել: Հայդի, դնանք:

ՅՈԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Տոնոյի խրճիթը: Տոնոն, Աթոն յեվ Վարոսը սեղանի շուրջը նըստած խմում են:

ՏՈՆՈ.—Խմում եմ Աթոլի, մեր սիրելի գլուղ-նախագահի կենացը: Յեկ յերկրորդ անգամ, միջանկալ մեր նախագահի կենացը:

Ա.Ա.ԲՈՒ. — Կարելի լե և Յ անդամ խմել մեր Աթոլի կենացը, վորագինուե շատ մեծ բարիք և արել Աթոն մեզ համար:

Ա.ԹՈ. — Եղքան ել ինձ միք գովի: Յես ենպիս մի յերենի բան չեմ արել, այլ միայն իմ զիծն եմ տարել, լավ տնտեսատերին պաշտպանել, իսկ անբանի և ծուլի համար փոս փորել:

Ա.Ա.ԲՈՒ. — Հա, հա, հա: Ի՞նչ լավ և ասում: Բերան չի, տաճար և, տաճար: Խմաստուն խոսք եւ Լավ տնտեսատերին թե տալ, պաշտպանել, իսկ անբանի և ծուլի համար փոս փորել:

Ա.ԹՈ. — Վորպեսզի վոտի տակ չընկնի և ուրիշներին չխանգարի:

ՏՈՆՈ.—Ի՞նչ լավ զլիսի տեր ես, Աթոն, ուղեղղ շատ և, շատ: Ելի քո կենացը Աթոն: Յերկար տարիներ ուրախութամբ նախագահենս, մեզ միխթարես և թշնամիներիս խորտակես:

Ա.ԹՈ. — Շնորհակալ եմ, շնորհակալ ձեր շոլանքի համար: Արդպես ել պիտի ապրենք, մեկը մեկիս ամուր բռնենք, իրար ոգնենք: Հիմա ծանր ժամանակներ ենք ապրում:

Ա.Ա.ԲՈՒ. — Նույնն ավետարանն ել և ասում «Սիրեցնք միմւանց, զի սերն աստծուց ե»:

ԹՈՒԻՆԻԿ. — (Ներո զալով թերքը ձեռքին) Հայրիկ, հայրիկ, շուտ կարդացեք թերթը: Գեղամը պատուհանից զցեց: Ինձ ասավ ձեր մասին բան և գրած:

ՏՈՆՈ. — Տեր աստված, այս ի՞նչ բան և, ելի ի՞նչ կա.

Վ.Ա.ԲՈՒ. — (Յերեսը իաշակնելով) Վողորմած եր, նոր փորձանքի մեջ չզցես մեզ:

ՏՈՆՈ. — (Նույն ու մուռ տալով թերքը) Ախր ուր և: Չեմ կարող չոկել ի՞նչն ի՞նչոց և:

- ԹՈՒԽԵՒԿ.** — Գեղամն ասավ, կարծիք մատիտով գծած է:
- ԱԹՌ.** — (Նայելով թերթին) Ահա, ես ե, ելի Տվեք ինձ (վեցը նում և թերթը Տօնու յել Վարոսը նայում են թերթին Արոյի ուսից):
- ԱԹՌ.** — (Կարդում ե, իսկ մյուսները նետելում են) Անկանոն վերը ընտրություններ, Քոչարանց Աթռն ընտրովներին արագ և խմբել: Հրամագրում և գուղխորհուրդն ընտրել գալիներ՝ կայացուցչի ներկայությամբ:
- ՏԾՆՅ.** — Հա:
- ՎԱՐԹՈՒ.** — Դու ոգնես, ով սուրբ կույտ:
- ԱԹՌ.** — Գլխներին փորձանք յեկավ չսպասած տեղից: Հիմա մեն ինչ կորած և մեզ համար:
- ՏԾՆՅ.** — Ամեն ինչ կորած է: Ախր եղ ինչպես յեղավ: Եղակաւ բան ախր չի լինի:
- ՎԱՐԹՈՒ.** — Աստված իմ, աստված, աստված, աստված:
- ՏԾՆՅ.** — Նրան սպանելը հյա քիչ է: Շուն, շան փորդի: Գող, ապագակ: Ախ, միտ: Վերջին պատառ հացից են զրկում: Աւզ զում են մուրացկան դարձնել:
- ՏԾՆՅ.** — Եդ մում մասին ե, Աթռ:
- ԱԹՌ.** — Ել մում մասին կիխնի, ել ում: Նրա, վոր յերկրորդ անգամն և գրում:
- ՎԱՐԹՈՒ.** — Խսկապես ես յերկրորդ անգամն ե: Ախր եղ ով Եղողը:
- ՏԾՆՅ.** — Այս, Նրան սպանելը գեռ քիչ է: Բայց ախր մով ե: Առաջ կարծիք կար Մարկոսի վրա, բայց նա զուրս չեկավ: Հիմա, անշուշտ, անպատճառ պիտի գտնենք:
- ԱԹՌ.** — Ե, հաշիվը միենուին ե, մեր զործը մեռավ: Յեթե հիմա նոր ընտրություն լինի, ել մեզ ներս մտնելու ծակ չի լինի:
- ՏԾՆՅ.** — Վհչ, միենուինը չի: Մեզ բոլորին խորտակողը կենդանի չպետք և ֆիա:
- ՎԱՐԹՈՒ.** — Բայց մով ե, մով: Կարելի յե թերթում նրա անունը կա:
- ՏԾՆՅ.** — Վհչ: Յեկ ալս, և ալն անգամ ել ասված ե: Մեղ գրում են ձլոխանից, իսկ թե մով ե գրողը, չկա:
- ԹՈՒԽԵՒԿ.** — Ասում են Վասիլանց տղերքը Ալոն ու Տիկոն գլուղը խառնել են ու Աթոլի գեմը սրել:
- ՏԾՆՅ.** — Վասիլանց տղերքն ես ասում, հա:
- ՎԱՐԹՈՒ.** — Հավատալու յե: Ավագակ տղերք են: Աստծուն ել չեն հավատում:

- ԱԹՈ.—Վասիլանց տղիքը. հա. հա. ինչպացի աղջիկ ունեա.
ՏՌՆԱ. Հիմարը մենք ենք, վոր ուշ գլխի լենք ընկնում:
Յեթև առաջ հասկացած լինելինք, այս փորձանքին ել չե-
լինք դալ:
- ՏՄՆՈ.—Ռւրեմն զու կարծում ես, վոր նրանք են գրել:
- ԱԹՈ.—Նրանցից ջոկ ել ով կլինի: Զե վոր նրանք եսոր չե-
զուց մտնում են կոմսոմոլի շարքերը:
- ՎԱՐՈՍ.—Կոմսոմոլի շարքերը:
- ԱԹՈ.—Ինչպես չե: Ամեն շարաթ որ նրանք Փանիկ ժողովի լին
գնում: Այդ զլուզումն ե նրանց ակումբը:
- ՏՄՆՈ.—Եղ ինչպես ե, վոր զու չիս հետեւել:
- ԱԹՈ.—Ինչպես չե. հետեւել հետեւել եմ, բայց կարգին չեմ հւ-
տեկ:
- ՏՄՆՈ.—Ռւրեմն հիմա գործը պիտի շտկել: Ամեն շարաթ որ
Փանիկ են գնում, ասում ես, իրիկունը:
- ԱԹՈ.—Այս, իրիկունը:
- ՏՄՆՈ.—Եղ նշանակում ե, վոր նրանց ճանապարհը կամուրջի
վրով ե անցնում: Լավ: Ենտեղ նրանց պիտի հանդիպել
Այս, Գետակն արագահոս ե... կքշի, կտանի հետքերը կը-
կորցնի:
- ՎԱՐՈՍ.—Հա, հա, հա... Գետակն արագահոս ե... ճիշտ ե, շատ
ճիշտ ե:
- ԱԹՈ.—Խուլ ել տեղ ե: Գալող, գնացող չի լինի:
- ՎԱՐՈՍ.—Հենց այսոր շարաթ ե, վոր կա:
- ԱԹՈ.—Լավ ել ժամանակ ե:
- ՏՄՆՈ.—Վեր կացեք գնանք: Չուշանանք, լետ չմնանք: Այսոր-
վա բանը վաղվան չթողնենք:
- ՎԱՐՈՍ.—Յես ել գմն, ՏՌՆԱ:
- ՏՄՆՈ.—Դու. քո գալդ պետք չի: Տուն գնան: Մենք ԱԹՈՒի հետ
գործը կտնենենք:
- ԱԹՈ.—Հետներս ի՞նչ վերցնենք:
- ՏՄՆՈ.—Ինչ վերցնենք: Այ, լես կացինը կառնեմ:
- ԱԹՈ.—Յեվ լերկու տոպրակ, գլուխներն անցկացնելու, բերան-
ները փակելու: Բայց կացինը տուր ինձ:
- ՎԱՐՈՍ.—Փաթաթել պիտի, վոր տեսնող չինի:
- ՏՄՆՈ.—Վոչինչ: Դուրսը մութն ե: Գնանք:
- ԱԹՈ.—Գնանք: Հարմար ժամանակը չանցկացնենք:
- ՎԱՐՈՍ.—Կոմսոմոլներ, հա, հա, հա (գնում եյ):

ԹՈՒԽԻԿԻ. — Զեզ եղագիս ևլ պետք է, անիծվածները թաղաքացու շոր ենք հազնում, բարձր կրունկներով կոշիկներ, մին ևլ տեսար ծաղրեցին ևլ չեք ծաղրի (սեղանիր վեր և խաղում): Ե, ելի մարդու սիրտ ճմրվում է: Ինչպես նրանց կամուրջի վրա...

ԳԵՂԱՄՄ. — (Ներս մՏնելով) Խաղելինը տանը չի:

ԹՈՒԽԻԿԻ. — Եղ զմւ իսո, Գեղամ: Վաչ, հայրիկս տանը չի: Համ, համ, համ:

ԳԵՂԱՄՄ. — Ել զմւ ինչ ևս հահսում, հարցնելն ամոթ չլինի:

ԹՈՒԽԻԿԻ. — Ինձ հետ զմւ-լով մի խոսի իսկ ծիծաղում եմ, զորովհետեւ ծիծաղելի լի: Դու զիտե՞ս, ով և լրազրին զրողը:

ԳԵՂԱՄՄ. — Թե զիտես, տաս:

ԹՈՒԽԻԿԻ. — Վասիլանց Ալոն ու Տիկոն:

ԳԵՂԱՄՄ. — Վասիլանց: Դու եղ վարեզից զիտես:

ԹՈՒԽԻԿԻ. — Ինձ զու մի տաս, քանի անգամ տաված է: Իսկ զիտենալը զիտեմ, վորովհետեւ եստեղ խոսք բացվեց: Ե, ասենք, վոր վոչինչ: Ել չեն զրին Ազնաեղ կամուրջի վրա նըրանց հախիցը կոտն:

ԳԵՂԱՄՄ. — Ի՞նչ կամուրջ:

ԹՈՒԽԻԿԻ. — Այ, են կամուրջը, վորը Փանիկի ճամբի վրա լի:

ԳԵՂԱՄՄ. — Այ, զու (յես և դանօւմ յիկ վազում):

ԹՈՒԽԻԿԻ. — Դու եղ մեր: Ինչմտ փախազ: Այ մարդու հիմարը:

ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Կամուրջը. ճանապարհը: Կատարյալ մութն եւ: Դուքս են գալիս
Աթոն յեվ Տոնոն, զողի պես չորո կողմը նայելով:

ԱԹՈ.—Այստեղ: Պահվենք կամուրջի թևերի տակ:

ՏՈՆԻ.—Ա՞յս, շնչառպառ լեզա:

ԱԹՈ.—Սուս... կարծես գալիս են: Յես խոսքի կրոնեմ նրանց,
իսկ զու յատեկից (մոտենում են Վասիլանց տղերքը):

ԱԼՈՒՆ.—Ինձ ասին, վոր ալսոր բջիջում մեր դիմումը պիտի
նայեն:

ՏԻԿՈ.—Ե, կլինի, վոր չնդունեն:

ԱԼՈ.—Ինչը չեն ընդունի: Միթե մեր հայրը կուլակ է: (Մրու-
րյան մեջ կպչում ե Արոյին): Ես մվ ե:

ԱԹՈ.—Ալեկո, դո՞ւ լես:

ԱԼՈ.—Հա, Քոչարանց Աթոն եւ: Մեր բարեկը: Թերթը կարդա-
ցի՞ք: Հա, հա:

ՏԻԿՈ.—Ձեր թագավորութիւնը չքավորութիւն վրայից արդեն
վերջացավ:

ԱԹՈ.—Սպասիր: Մի բան հարցնեմ:

ԱԼՈ.—(Կանգ ե առնում): Ի՞նչ կա: Մենք սպասելու ժամանակ
չունենք:

ԱԹՈՆ.—Լքագրից պիտի հարցնեմ: (Հարձակվում ե մեռնի ձեռ-
իքն Ալեքի վրա, Տոնոն ել՝ Տիկոյի):

ԱԼՈ.—Այ, այ, այ...

ՏԻԿՈ.—Մեկն ել կա հստեղ: Բաց թող դե...

ԱԹՈ.—Կապիր շուտով:

ՏՈՆԻ.—Այ, ալդպես: Գլխներիս թղթակիցներ են դարձել:

ԱԼՈ.—(Խեղդվելով) Այ, այ...

ՏՈՆԻ.—Ե, հլա տուր մի ճիպոտը: Առաջ մի լավ լուսենք:

ԴԵՂԱՄ.—(Վազելով հասնում ե) Ես ի՞նչ բան ե հստեղ: (Արսն
բաց ե բողնում Ալոյին): Այ, թե ի՞նչ գործ ե կատարում նա-
խագահը:

ԱԼՈ. — Նա մեղ սպանել եր ուզում։
ԱԹՈ. — Կորանք, Փախչենք! (Վազում են յերկուողի)։
ԳԵՂԱՄ. — Փախաք... Վճէ, չեք փախչի՛ վեր կաց, տպա։
ՏԻԿՈ. — (Հազում ե) ՄԵ, խ՛խ՛ի՛ նա ինձ մեշոկով... խ՛խ՛ի՛։
ԱԼՈ. — Ինչու ելին ուզում մեղ սպանել։
ԳԵՂԱՄ. — Տեսէք, կացինը թողել են... ախ, դուք! (Դեպի սղերքը)
Փանիկ եք զնում, տղերք, հան Յես ձեղ կուզեկցեմ։
ԱԼՈ. — Ախր ինչու ելին ուզում մեղ սպանել։

ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ

Երգործկոմ. Նախագահը. Քոչարանց Աթոն յեզ Տռնոն. Գեղամը-
դրադ կանգնած.

ԱԹՈ. — Բնկ. Նախագահ, ուրեմն իս ուզում եմ առաջուց զգու-
շացնել, վոր մեր ձևիսանում ուզում են ինձ բամբասել,
ձեր առաջ սեացնել:

ՆԱԽԱԳԱՀ. — Այդ նոր նշանակած ընտրությունների համար, եղ-
պես ե:

ԱԹՈ. — Վաչ. Աստված իրենց հետ, ում ուզում են, թող նրան
ել ընտրեն, եղ իրենց գործն ե: Բայց ինչու զրպարտել-
վոր իրբե թե իս ուզեցել եմ տղերանցն սպանել:

ՆԱԽԱԳԱՀ. — Ադալիսի տեղեկանք մենք չենք ստացել

ԱԹՈ. — Զի ստացվել, կստացվի: Յես եղ լավ զիտեմ: Յես լսել
եմ, վոր ինչպես մեր զլուղի ջահնեները և համարձակ ել-
կասեմ, ընկ. Նախագահ, վոր նրանք, այդ ջահնեներն ան-
հուսալի տղերք են, հենց ուզզակի հականեղափոխական են,
նրանց գլխավորները վասիլանց աղերքն են՝ Ալեքոն և Տի-
կոն, այդ ջահնեներն ինձ մեղադրում են, վոր իրբե թե իս-
ուզեցել եմ եղ Վասիլանց յերկուսին կամուրջի վրա սպա-
նել: Ո՞վ ե իմանում, թե նրանց կամուրջի վրա ծեծողն ով-
ե լիդել: Իսկ նրանք ուզում են այդ մեղքն ինձ վրա բար-
դել, ժողովրդի առաջ ինձ սեացնել, իմ վոսկի անունս փուլ-
շինել, ինձ խալտառակել: Այ եղանա, ընկ. Նախագահ: Զե-
վոր յես եղ մարդը չեմ, եղ նամուսի տերը չեմ: Մեկ ել վոր
եղ որը տանս բակից չեմ գուրս լեկել: Այ իմ վկան Գեղու-
տողանց Տռնոն ե: Մենք իրաբ հետ ենք յեղել:

ԳԵՂԱՄ. — Աղվեսի վկան իր պոչն ե: Եղ ուղիղ ե, վոր դուք իրաբ-
հետ եք յեղել: Միայն թե վոչ տանը, այլ հենց այն կա-
մուրջի վրա:

ԱԹՈ. — Գեղանմ, ևդ զո՞ւ լիս:

ԴԵՂԱՄ. — Բ՞նչ, բ՞նչ զարմանալի բան կա: Զարմանալին են և,
վոր մինչե հիմա լոել ելի, հիմա լիմ խռում: Հարկավոր եր
լոել, լոել ելի: Հիմա լեզուս պիտի բանամ: Բ՞նկ. նախա-
զան, լիս եղ յերկուսին կամուրջի վրալից փախցրի: Լավ եր,
վոր ժամանակին հասա: լիթե վոչ նրանք են յերկու ջահե-
լին կտոր-կտոր կանելին:

ԱԹՈ. — Գեղանմ, աստծուց վախեցիր:

ՏԱՆՅ. — Գեղանմ, ևդ բ՞նչ ևս բերում մեր զլիսին:

ԴԵՂԱՄ. — Վոչինչ, վոչինչ: Ասաված ոգնողը չի Յես քեզ, Աթո,
ձենիցդ ճանաչեցի, տեր զու զսուցիր «վախչենք»: և քեզ
աչքովս ել տեսա: Իսկ վոր Տոնոն քեզ հետ եր, այ դրան
ազացուց նրա կացինը՝ կամուրջի վրա թողած: Չեր վախից
ձեր ժարդ սպանելու դործիքը թողիք այնտեղ:

ՏԱՆՅ. — Գեղանմ, ախր ինչու համար խորտակել ևս ուղում մեզ:
Հավը վոր հավ ե, ջուր ե խմում ու աստծուն նալում:

ԱԹՈ. — Կարելի լի, վոր զու եդ բանը զաղեթին ել զրած լինես:

ԴԵՂԱՄ. — Այն. ըստ ինչո՞ւ զիտելիք: ալո, լիս ինքս եմ զրել զա-
ղեթին:

ՏԱՄԵՐՈՐԴԻ ՊԱՏԿԵՐ

Դյուզամիջ: Խմբերով՝ զյուղացիներ յեվ անցորդներ: Վրդով-ված ներս և ընկնում Ալոն:

Ա.Ա.Բ.—Լսել եք նորությունը:

- Ի՞նչ նորություն:
- Ելի ի՞նչ նոր բան կա:
- Տեսէք. տղան վազելով թափից ընկել եւ ի՞նչ նորություն եւ:

Ա.Ա.Բ.—Քոչարանց Աթոլին և Գեղուտողանց Տոնովին բանտարկել են: Պիտի գատեն:

- Բանտարկել են:
- Քոչարանց Աթոլին:
- Գեղուտողանց Տոնովին:
- Ի՞նչ եք ասում...

— Ա՛յ թե արդար դատաստանի յեն արժանացել:

Ա.Ա.Բ.—Պիտի գատեն ինչպես արադ քաշողների և մարդասպանների: Զե՞ վոր նրանք ուզում ելին ինձ և Տիկովին կամուրջի վրա սպանել:

— Ա՛յ, դուք չար դեմք, հոգեկորուստներ: Անիծվածներ: Բոլորի արլունը ծծեցին: Եղ քիչ եր: Զահել տղերանցն ել ուղեցել են սպանել:

— Ա՛յ, տեր աստված. Ի՞նչ անիրավություն, ի՞նչ չարագործություն:

Տիկով.—(Վազելով) Լսել եք: Նորություն:

— Եղ Աթոլի և Տոնովի մասին: Լսել ենք: Ուշացել եւ Ախաղերդ արդեն պատմեց:

Տիկովն.—Ե՛, վհչ: Ուրիշը: Գեղամի մասին:

— Գեղամի մասին:

— Ի՞նչ: Զլինի դլաբին փորձանք և լեկեր

— Ի՞նչ բան կա: Դեռ ասա: Հոգի մի հանի:

Տիկուն. — Վոչ մի փորձանք չկա: Այ թե ինչ լրազրին մեր գործերից զբողը, ի՞նչ եք կարծում, ո՞վ և Գեղամն և, Գեղամն և, Գեղամը: Դա մեր Գեղամն և:

— Ի՞նչ եք ասում: Ուրիշն նոմ լի զրել, բոլոր մութ գործերը լույս աշխարհ նոմ լի հանել:

Տիկուն. — Նա, Գեղամը:

— Գեղամը:

— Զորացրված Գեղամը:

— Շիտակ մարդ և: Շիտակ բաներից ել զրել և:

— Այ քեզ բան: Խոկ մենք մաքի տակ ելինք մնացել, տալիս, առնում ելինք, թե զրողն ով և:

— Այ ազամարդ: Կեցես, Գեղամ:

— Այ, ահանք նա Մարկոսի հետ մեզ մոտ են գալիս: (Անհնում են նրանք):

— Գեղամն:

— Կարմիր բանակալին Գեղամն:

Գեղամը. — Ի՞նչ կա: Ես ի՞նչ պատիզ և, վոր տալիս եք:

— Ի՞նչպես չե: Հիմա մենք քեզ պիտի պատվինք, հարզենք: Շնորհակալ պիտի լինենք:

Գեղամը. — Եղ ի՞նչո՞ւ համար:

— Եղ նրա համար, վոր մեզ ոգնում ևս ապրելու համար: Այսակող պատմեցին, վոր զու մեր անկանոն զործերը լրացրին ևս ավել:

Գեղամը. — Եղ ճիշտ և: Յես եմ զրել: Միայն թե չարժի, վոր շնորհակալ լինեք և մեծարեք ինձ զրա համար: Ամեն մարդ, ամեն մեկս մեզնից, պիտի կովի ճշմարտության համար և չքավոր լիզբորը, ընկերին ողնի:

ՄԱՐԿՈՍ. — Ուրիշն եղ դժւ լիս զրել:

Գեղամը. — Յես:

ՄԱՐԿՈՍ. — Նշանակում ե զու հիմա գլուղթղթակից ես: Այ բան:

Շատ բան եմ կարգացել լիս եղ զյուղթղթակիցների մասին, բայց աչքով չելի տեսել: Առաջ արի, քեզ մի լավ նայեմ, տնտղեմ (առաջ և հաւում):

Գեղամը. — (Միծադում է) Հա, հա, հա, զու մասխարա, սատանա Մարկոս:

ՄԱՐԿՈՍ. — Խոկ զու զիտես, վոր քո պատճառով Տոնոն ինձ ձեւ ծել եր ուզում:

ԴԵՂԱՄ. — Գիտեմ, գիտեմ: Խնչպես չգիտեմ: Են տուսակը լուսա-
մուտից զցողը լեռ շելի, ո՞վ եր:

ՄԱՐԿՈՍ. — Դուք Այ քեզ բան: Դու լավ մարդ ես լիզել, Գեղամ,
բոլորի հոգուը քաշում ես:

— Եղ զրուստ ե, բոլորի հոգուը քաշում ե:
— Բոլորին ոգնում ե:

ԴԵՂԱՄ. — Հիմիկվանից գուք պիտի ոգնեք ինձ, վորովհետեւ ունե-
փորները և ծուռ հոգի մարդիկ վլուխս ուտել են ուզում:

ՄԱՐԿՈՍ. — Ճիշտ և ասում: Յես միշտ կարդում եմ լրագրում.
Նրանք, վոր մաքուր խիզճ չունեն, չեն սիրում գլուղթղթա-
կիցներին, ծեծում են նրանց, մինչև անգամ սպանում ել են:

— Մենք թույլ չենք տա:
— Պաշտպանել կարող ենք:
— Մեր աչքի լուսի պես կպահենք Գեղամին:


ԴԵՂԱՄ. — Այ թե ինչ լավ եք ասում. լեզրալրներ: Մենք բոլորս
ձեռք ձեռքի տված աշխատենք և իրար ոգնենք:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—

Տոնոն՝ փորձված, խելացի դիմքով, կուլակ և. Աթոն
շուտ ըմբռնող, իր կողմը քաշող գործունյա մարդ ե. Վա-
րոսը վախկոտի մեկն ե. Գեղամը՝ խելքը գլխին, ազնիվ լե-
րիտասարդ ե. Մարկոսը՝ չափած-ձեած, ինքնուրույն, ծաղ-
րող մարդ ե: 5-րդ պատկերի 1-ին ձայնը Գեղամն ե, 2-րդը՝
գալլսմբագիրը:





1880

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220041554

[104.]

A-
MISSISS



ԳԻՆԸ ՅՈՒՆԱՏ